վերին եկեղեցւոյն և վանիցն տակաւին երևին ի մէջ եկեղեցւոյն, եւ մնաց մինչ ցդալ այլազգեաց, որ քակեալ զվերին եկեղեցին եւ վանքն, այնու նորոգեցին զտաճարն Սողոմոնի, որպէս և պատմագիրքն նոցա վկայէ» (Հան. էջ 272)։

Հայոց Տրդատ թագաւորին Ս. Տեղեաց աւանդական շինութեանց մասին յիշատակարան չունինք, միայն Յայսմաւուրքը Ապրիլ 12ին անոր վարքագրութեան մէջ կ'ըսէ. «Սորա է կառուցեալ զվանս Բեթղեհէմի եկեղեցեաւն հանդերձ և զայլ եկեղեցիս յԵրուսաղէմ»։

3. Հայոց Անաստաս վարդապետի «Վասն վանորէից Հայոց որ յԵրուսաղէմ» (Է. Դար). — Անաստաս վարդապետ այս խորագրով Հայ վանորէից ցուցակին սկիզբը կը դնէ հետևեալ հատուածը. «Ի ժամանակս թագաւորութեան Տրդատայ եւ ի հայրապետութեան սրբոյն Գրիգորի Լուսաւորչին, մեծամեծ իշխանքն Հայոց շինեցին վանորայք ի սուրբ քաղաքն Երուսաղէմ. . . : Ամենայն բովանդակ եօթանասուն վանք շինեալ եղև յիշխանաց Հայոց ի սուրբ քաղաքն յԵրուսաղէմ, ի տեղիս տնօրինականացն Քրիստոսի եւ յայլ աստուածակոխ տեղիսն։ Եւ զմեծամեծ եկեղեցի.քն, զԳողգոթա, զԾնունդն, զսուրբ Յակոբն, զՀրեշտակապետն և զՓրկիչն, զՎերնատունն և զՀամբարձումն, զՃառներն և զՄաչ Գիւան, զՄորանն Լուսաւորչին և զաստուածընկալ Գերեզմանն, շինեալ եղև ի թագաւորէն Տրդատայ եւ ի սրբոյն Գրիգորէ Լուսաւորչէն։

Եւ այս ամենայն վանորայքս յԵրուսաղէմ ի սուրբ Լուսաւորչէն հաստատեցան, բայց յոլովս՝ ի Ներսիսէ,